

Տոկոսագումարի հաշվարկման, վճարման կարգը և օրինակը

Տոկոսագումարները հաշվարկվում են վարկի մայր գումարի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական:

Տոկոսագումարի հաշվարկի համար հիմք է ընդունվում 360 օր օրացուցային տարին:

Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$ԿՏԳ = Կուտակված տոկոսագումար = \sum_{i=1}^{O\Phi} (SS \times U\%_i / 360)$$

որտեղ՝

OΦ = օրերի քանակն է,

SS = տարեկան պայմանագրային տոկոսադրույքը,

U%_i = վարկի մայր գումարի մնացորդը i-րդ օրվա վերջին:

Տոկոսագումարների մարումը կատարվում է ամսական:

Վարկի մայր գումարը հիմնականում ենթակա է մարման հավասար ամսական վճարներով, սակայն հնարավոր է նաև վճարման առավել ճկուն ժամանակացույց և/կամ մարումների այլ հաճախականություն՝ հաշվի առնելով յուրաքանչյուր վարկառուի բիզնեսի առանձնահատկությունները և դրամական հոսքերի սեզոնայնությունը:

Օրինակ՝

ՎԱՐԿ

Վարկի գումարը առ 01.01.09թ. – 150,000.0 ՀՀ դրամ,

Մայր գումարի մարում 02.01.09թ-ին – 50,000.0 ՀՀ դրամ

Վարկի մնացորդը առ 02.01.09թ. – 100,000.0 ՀՀ դրամ

Վարկի տարեկան տոկոսադրույքը – 16.0 %,

1 օրվա հաշվարկված տոկոսագումարը՝ մայր գումարի մարումից հետո = $100,000.0 \times 16.0 \% / 365$
= 43,85 ՀՀ դրամ:

02.01.09 – 02.02.09թթ. հաշվարկված տոկոսագումարը՝

$43.85 \times 31 = 1359.35$ ՀՀ դրամ